



ՀԱՅԿԱԿԱՆ  
ՀՈԳԵՐՈՒԺԱԿԱՆ  
ԱՍՈՑԻԱՅԻԱ

Հատոր  
Value  
Том

7

Թիվ  
Number  
Номер

2.2016

# ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈԳԵՐՈՒԺԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՅԻԱՅԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

ARMENIAN JOURNAL  
OF MENTAL HEALTH  
OFFICIAL JOURNAL  
OF ARMENIAN PSYCHIATRIC  
ASSOCIATION

АРМЯНСКИЙ ЖУРНАЛ  
ПСИХИЧЕСКОГО ЗДОРОВЬЯ  
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ  
АРМЯНСКОЙ ПСИХИАТРИЧЕСКОЙ  
АССОЦИАЦИИ





**Հոգեկան առողջության հայկական հանդես**

«Հոգեկան առողջության հայկական հանդեսը» Հայկական հոգեբուժական ասոցիացիայի պաշտոնական պարբերականն է: Հանդեսը եռալեզու է՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն: Հոդվածները գրայնաչափով են: Հանդեսում հրատարակվում են գիտական, ակնարկային հոդվածներ, հայ և արտասահմանյան գիտնականների հետազոտությունների արդյունքներ, օգնություն պրակտիկ բժշկին, թարգմանություններ, հոգեկան առողջության ոլորտին վերաբերող այլ տեղեկություններ: Հոդվածներից մեջբերումներ անելիս հղումը «Հոգեկան առողջության հայկական հանդեսին» պարտադիր է, ամբողջական վերաբերումները՝ ամսագրի խմբագրության գրավոր թույլտվությամբ: Հանդեսը ներառված է ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի ստեղծագործությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում:

**ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ**

Արմեն Սողոյան (ՀՀ)  
**ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ**

Սամվել Մուքիայան (ՀՀ)  
**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈՒՆԳԻՆ**

Հակոբ Ալիսկալ (ԱՄՆ)  
Ալյա Ավետիսյան (ՌԴ)  
Իսախանյան Գասպարյան (ՀՀ)  
Սամվել Գրիգորյան (ՀՀ)  
Կոնստանտին Դանիելյան (ՀՀ)  
Մարուքե Եղիան (ՀՀ)  
Պարունակ Ջելվեյան (ՀՀ)  
Արամ Հակոբյան (ՀՀ)  
Արմեն Մելիք-Փաշայան (ՀՀ)  
Արթուր Մկրտչյան (ՀՀ)

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ**

Ալլեն Ազիզյան (ԱՄՆ)  
Ռուբեն Աղուզումցյան (ՀՀ)  
Գայանե Արակելովա (ՀՀ)  
Արմենուհի Ավագյան (ՀՀ)  
Հրանտ Ավանեսյան (ՀՀ)  
Լիլիթ Բաղդասարյան (ՀՀ)  
Այա Բերբերյան (ՀՀ)  
Անահիտ Կարգյան (ՀՀ)  
Սրբուհի Գևորգյան (ՀՀ)  
Արման Դանիելյան (ԱՄՆ)  
Մերգեյ Ենիկոլոպով (ՌԴ)  
Ադա Թադևոսյան (ՀՀ)  
Կարինե Թաթարյան (ՀՀ)  
Սամվել Թորոսյան (ՀՀ)  
Նարինե Խաչատրյան (ՀՀ)  
Սամվել Խոսրոյան (ՀՀ)  
Սոնա Հարությունյան (ՀՀ)  
Գայանե Ղազարյան (ՀՀ)  
Ստեփան Մաթևոսյան (ՌԴ)  
Արմեն Ներսիսյան (ՀՀ)  
Գայանե Շահվերդյան (ՀՀ)  
Աննա Չիլինգարյան (ՀՀ)  
Բորիս Պիվեն (ՌԴ)  
Վազգեն Պողոսյան (ՀՀ)  
Գայանե Սարգսյան (ՌԴ)  
Սեդրակ Սեդրակյան (ՀՀ)  
Եվգենի Սնեդկով (ՌԴ)  
Վիկտոր Սոլդատկին (ՌԴ)  
Կամո Վարդանյան (ՀՀ)

**Armenian Journal of Mental Health**

«Armenian Journal of Mental Health» is the official, peer reviewed Journal of Armenian Psychiatric Association. Articles are publishing in Armenian, Russian and English. It publishes research articles, forums, Mental Health policy papers, translations and news related to Mental Health field from authors of all regions and countries. Citation from articles should be mentioned by authors. For reproducing articles from this journal a written permission from the publisher is required. The journal is recognized by «Higher Qualification Committee» Agency of RA and accepted in the special list of acknowledged periodical publications.

**EDITOR IN CHIEF**

Armen Soghoyan (Armenia)

**ASSOCIATE EDITOR**

Samvel Sukiasyan (Armenia)

**EDITORIAL BOARD**

Hagop Akiskal (USA)  
Alla Avedisova (Russia)  
Khachatur Gasparyan (Armenia)  
Samvel Grigoryan (Armenia)  
Konstantin Danielyan (Armenia)  
Maruke Yeghiyan (Armenia)  
Parounak Zelveian (Armenia)  
Aram Hakobyan (Armenia)  
Armen Melik-Pashayan (Armenia)  
Artur Mkrtchyan (Armenia)

**ADVISORY BOARD**

Allen Azizyan (USA)  
Rouben Aghuzumtsyan (Armenia)  
Gayane Arakelova (Armenia)  
Armenuhi Avagyan (Armenia)  
Hrant Avanesyan (Armenia)  
Lilit Baghdasaryan (Armenia)  
Asya Berberyan (Armenia)  
Anahit Gevorgyan (Armenia)  
Srbuhi Gevorgyan (Armenia)  
Arman Danielyan (USA)  
Sergey Yenikolopov (Russia)  
Ada Tadevosyan (Armenia)  
Karine Tataryan (Armenia)  
Samvel Torosyan (Armenia)  
Narine Khachatryan (Armenia)  
Samvel Khudoyan (Armenia)  
Sona Harutyunyan (Armenia)  
Gayane Ghazaryan (Armenia)  
Stepan Matevosyan (Russia)  
Armen Nersisyan (Armenia)  
Gayane Shahverdyan (Armenia)  
Anna Chilingaryan (Armenia)  
Boris Piven (Russia)  
Vazgen Poghosyan (Armenia)  
Gayane Sarkisyan (Russia)  
Sedrak Sedrakyan (Armenia)  
Evgeni Snedkov (Russia)  
Viktor Soldatkin (Russia)  
Kamo Vardanyan (Armenia)

**Армянский журнал психического здоровья**

«Армянский журнал психического здоровья» является официальным рецензируемым журналом Армянской психиатрической ассоциации. Статьи издаются на армянском, русском и английском языках. В журнале публикуются научные и обзорные статьи, результаты исследований отечественных и зарубежных ученых, переводы статей, информация, касающаяся психического здоровья, сообщения для практикующих врачей и др. При цитировании опубликованных в журнале статей ссылки на «Армянский журнал психического здоровья» обязательны. При полной перепечатке статьи письменное разрешение редакции обязательно. По решению Высшей аттестационной комиссии журнал включен в список периодических научных изданий, принятых для публикации основных результатов и положений диссертационных работ.

**ГЛАВНЫЙ РЕДАКТОР**

Армен Согалян (Армения)

**ОТВЕТСТВЕННЫЙ РЕДАКТОР**

Самвел Сукиасян (Армения)

**РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ**

Акоп Акискал (США)  
Алла Аведисова (Россия)  
Хачатур Гаспарян (Армения)  
Самвел Григорян (Армения)  
Константин Даниелян (Армения)  
Маруке Егиян (Армения)  
Парунак Зелвеян (Армения)  
Арам Акопян (Армения)  
Армен Мелик-Пашаян (Армения)  
Артур Мкртчян (Армения)

**РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ**

Аллен Азизян (США)  
Рубен Агузумцян (Армения)  
Гаяне Аракелова (Армения)  
Арменуи Авагян (Армения)  
Грант Аванесян (Армения)  
Лилит Багдасарян (Армения)  
Ася Берберян (Армения)  
Анаит Геворкян (Армения)  
Србуи Геворкян (Армения)  
Арман Даниелян (США)  
Сергей Ениколопов (Россия)  
Ада Тадевосян (Армения)  
Карине Татарян (Армения)  
Самвел Торосян (Армения)  
Нарине Хачатрян (Армения)  
Самвел Худоян (Армения)  
Сона Арутюнян (Армения)  
Гаяне Казарян (Армения)  
Степан Матевосян (Россия)  
Армен Нерсисян (Армения)  
Гаяне Шахвердян (Армения)  
Анна Чилингарян (Армения)  
Борис Пивень (Россия)  
Вазген Погосян (Армения)  
Гаяне Саркисян (Россия)  
Седрак Седракян (Армения)  
Евгений Снедков (Россия)  
Виктор Солдаткин (Россия)  
Камо Варданян (Армения)

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Մեդարմ» ՍՊԸ, վկայական 03 ԱՕ90191 տրված՝ 28.12.2010թ. հասցե՝ ք. Երևան, Պ. Սևակի փող. 5

Ստորագրված է տպագրության 20.12.2016թ.

Համարի թողարկման պատասխանատու՝ Արմեն Սողոյան  
Տպարանակ 300  
Երևան 2016թ.

5

ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ  
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
1999-2015թթ ԸՆԹԱՅՔՈՒՄ  
Կ.Ե. Վարդանյան

СТАТИСТИЧЕСКИЙ  
АНАЛИЗ САМОУБИЙСТВ  
В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ  
В1999-2015 г.г.  
К.Е. Варданян

STATISTICAL ANALYSIS  
OF SUICIDE IN ARMENIA  
DURING 1999-2015  
K.E. Vardanyan

17

1988թ. ՍՊԻՏԱԿԻ  
ԵՐԿՐԱՇԱՐԺԻ  
ՀՈԳԵԱԽՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ.  
ՍՏԱՏԻԿԱ ԵՎ ԴԻՆԱՄԻԿԱ:  
ՄԱՍ 2  
Ս.Հ. Սուքիասյան

ПСИХОПАТОЛОГИЯ  
СПИТАКСКОГО  
ЗЕМЛЕТРЯСЕНИЯ 1988  
ГОДА: СТАТИКА И  
ДИНАМИКА. ЧАСТЬ 2  
С.Г. Сукиасян

THE PSYCHOPATHOLOGY  
OF SPITAK EARTHQUAKE  
1988: STATICS AND  
DYNAMICS. PART 2  
S.H. Sukiasyan

33

ԴԱՏԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
Վ.Ֆ. Ենգալիչև  
Գ.Ա. Գազարյան

ОСНОВНЫЕ  
ЗАДАЧИ СУДЕБНО-  
ПСИХОЛОГИЧЕСКОЙ  
ЭКСПЕРТИЗЫ В  
АРМЕНИИ  
В.Ф. Енгалычев  
Г.А. Казарян

THE BASIC ISSUES  
OF FORENSIC  
PSYCHOLOGICAL  
EXPERTISE  
IN ARMENIA  
V.F. Engalychev  
G.A. Ghazaryan

41

ՎԱԼԻԴԱՑԿԱԾ  
ՊՍԻԽՈՄԵՏՐԻԿ  
ՀԱՐՑԱՇԱՐԵՐԻ ԴԵՐԸ  
ՍՏԱՄՈՔՍԱՂԻՔԱՅԻՆ  
ՈւՂՈւ ՖՈւՆԿՑԻՈՆԱԼ  
ԽԱՆԳԱՐՈւՄՆԵՐՈՎ  
ՀԻՎԱՆԴՆԵՐԻ  
ՀՈԳԵԲՈւԺԱԿԱՆ  
ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ  
ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ  
(ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ)  
Մ.Բ. Գեմիլյան

ЗНАЧЕНИЕ  
ВАЛИДИЗИРОВАННЫХ  
ПСИХОМЕТРИЧЕСКИХ  
ОПРОСНИКОВ ДЛЯ ОЦЕНКИ  
ПСИХИАТРИЧЕСКОГО  
СТАТУСА У БОЛЬНЫХ С  
ФУНКЦИОНАЛЬНЫМИ  
ЗАБОЛЕВАНИЯМИ  
ЖЕЛУДОЧНО-КИШЕЧНОГО  
ТРАКТА (ОБЗОР  
ЛИТЕРАТУРЫ)  
М.Б. Гемилян

THE ROLE OF VALIDATED  
PSYCHOMETRIC  
QUESTIONNAIRES IN  
EVALUATION OF MENTAL  
HEALTH IN PATIENTS  
WITH FUNCTIONAL  
DISORDERS OF  
GASTROINTESTINAL  
TRACT (LITERATURE  
REVIEW)  
M.B. Gemilyan



50

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ  
ԵՎ ԱՆՁՆԱՅԻՆ ԱՃԻ  
ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ  
Ա.Ն. Նազարյան

ВЗАИМОДЕЙСТВИЕ  
СОЦИАЛЬНЫХ  
СТЕРЕОТИПОВ И  
ЛИЧНОСТНОГО РОСТА  
А.С. Назарян

SOCIAL STEREOTYPES  
AND PERSONAL GROWTH  
INTERACTION  
A.N. Nazaryan

56

ՀՈԳԵՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ  
ԵՎ ՆՐԱ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՄԱՍԻՆ  
Ա.Վ. Վարդանյան

О ПСИХОАНАЛИЗЕ И  
ЕГО ОСОБЕННОСТЯХ  
А. В. Варданян

ABOUT  
PSYCHOANALYSIS AND  
ITS PECULIARITIES  
A.V. Vardanyan

## Հարգելի գործընկերներ,

Լույս է տեսել Հոգեկան առողջության հայկական հանդեսի հերթական համարը:

Այսուհետ ամսագիրը ներկայացվում է նոր ձևավորմամբ, հուսով ենք այն ավելի դուր կգամեր ընթերցողներին:

Համարում ներկայացված աշխատանքներն ընդգրկում են հոգեկան առողջության տարբեր ոլորտներ: 1999-2015թթ. սուիցիդների ամբողջական վիճակագրությունը, համապատասխան վերլուծությունը և դրանից բխող առաջարկներ է ներկայացրել Կամո Վարդանյանը: Այս ոլորտում բավական լուրջ համագործակցություն է նախաձեռնված նորվեգացի գործընկերների հետ այս բնագավառում, հուսով ենք արդյունքներն առաջիկայում տեսանելի կլինեն: Սուիցիդների կանխարգելման, տեղեկատվության հավաքման և վերլուծությունների առումով բավական լուրջ ակնկալիքներ ունենք «Անտիսուիցիդ» կենտրոնի իրականացվելիք գործունեությունից:

Երկրաշարժի հետևանքների վերաբերյալ ներկայացված աշխատանքը (հեղ. Սամվել Սուքիասյան) ուշադրություն է գրավում աղետի ինչպես անհատների, այնպես էլ հասարակության վրա ունեցած երկարաժամկետ հետևանքների առումով, ինչպես հոգեկան, այնպես էլ սոմատիկ խանգարումների դրսևորմամբ: Հետտրավմատիկ սթրեսային խանգարումների, նաև սթրեսի կառավարման հիմնախնդիրների ուսումնասիրման և լուծումների ներկայացման գործում կարևորում ենք նորաստեղծ Սթրեսի և ցավի կառավարման կենտրոնի գործունեությունը և այս ոլորտի զարգացումները մշտապես կլինեն մեր ուշադրության կենտրոնում: Հոգեմարմնական և մամնահոգեկան խանգարումների, դրանց ախտորոշման, ախտորոշման հարցաշարերի և հարցաշարերի վալիդացվածություն/ադապտացվածության խնդիրներն են ներկայացված Մանիկ Գեմիլյանի աշխատանքում: Առաջիկայում

նոր համագործակցություն կսկսվի սոմատիկ խանգարումների ժամանակ հոգեկան ոլորտի ուսումնասիրման և այս ոլորտում միջազգայնորեն ընդունված ուղեցույցների և գործելակարգերի տեղայնացման և կրառման ուղղությամբ: Կարևորում ենք նաև հարցաշարերի վալիդացման հստակ կանոնակարգումն ու դրա հետևողական իրականացումը:

Դատահոգեբանական փորձաքննությունների հիմնախնդիրները և հատկապես մասնագիտական որակների և կարգավիճակի հարցերն են ներկայացված Գայանե Ղազարյանի աշխատանքում: Ընդհանուր փորձաքննությունների ոլորտը վաղուց կարիք ուներ հիմնովին կարգավորման, ինչն արդեն նախաձեռնված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից և արդեն շրջանառության մեջ գտնվող նոր օրենքը կստեղծի դրա համար անհրաժեշտ նախադրյալները:

Սոցիալական կարծրատիպերի և անձնային աճի վրա դրանց հետևանքներին է անդրադարձել Անի Նազարյանը, ներկայացնելով կարծրատիպերի բացասական ազդեցությունը անձնային աճի վրա:

Մեր ամսագրի հրատարակման ամբողջ ընթացքում առաջին անգամ սխալմունք էր տեղի ունեցել նախորդ համարում, ինչի համար հայցում մեր գործընկերոջ, հոդվածի հեղինակ Անժելա Վարդանյանի ներողամտությունը և այս համարում ամբողջությամբ տպագրում ուղղված հոդվածը:

Այս տարի առաջին անգամ Հայաստանում նշվեց մտային խնդիրների համաշխարհային օրը, որը հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ուղղված Համաշխարհային հոգեբուժական ասոցիացիայի նոր նախաձեռնությունն է:

Բարի ընթացք ենք մաղթում բոլոր դրական նախաձեռնություններին:

**ՀՀԱ նախագահ  
Ա.Սողոյան**

# ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1999-2015թթ ԸՆԹԱՑՔՈՒՄ

**Կ.Ե. Վարդանյան**

**Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան  
Երևան, Հայաստան**

Սույն գիտական հետազոտությունը նվիրված է հասարակության մեջ լայն տարածում գտած անձի ինքնաքայքայիչ վարքի՝ սուիցիդի վիճակագրական վերլուծությանը 1999-2015թթ ընթացքում: Հեղինակի կողմից ներկայացվում է տեսականորեն հիմնավորված և գործնականորեն փորձարկված վիճակագրական մեթոդաբանություն և ստացված արդյունքներ, որոնք օգտակար կլինեն օբյեկտիվորեն մեկնաբանելու նման վարքի առաջացման դրդապատճառները, նպաստող պայմանները, մեխանիզմները:

**Հանգուցային բառեր.** դեստրուկտիվ վարք, հետերոդեստրուկցիաներ, աուտոդեստրուկցիաներ, ինքնաքայքայիչ վարքի դրդապատճառներ, ինքնասպանությունների վիճակագրություն:

## СТАТИСТИЧЕСКИЙ АНАЛИЗ САМОУБИЙСТВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ В 1999-2015 г.г.

**К.Е. Варданян**

**Армянский государственный педагогический университет имени Хачатура Абовяна  
Ереван, Армения**

Данное научное исследование посвящено проведенному в 1999-2015 годах статистическому анализу саморазрушительного поведения - суицида, широко распространённого в обществе. Со стороны автора представлены теоретически обоснованные и практически проверенные статистическая методология и результаты, которые дадут возможность объективно разъяснить причины возникновения такого поведения, содействующие условия и механизмы.

**Ключевые слова:** саморазрушительное поведение, гетеродеструкции, аутодеструкции, мотивы саморазрушительного поведения, статистика самоубийств.

## STATISTICAL ANALYSIS OF SUICIDE IN ARMENIA DURING 1999-2015

**K.E. Vardanyan**

**Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan  
Yerevan, Armenia**

The current research is devoted to the analysis of self – destructive behavior suicide which is widely spread in our society. The research was conducted between years 1999-2015. The data analysis is based on practically tested statistical methodology. The presented data would be helpful for analysis of the reasons of this kind of behavior predisposing conditions and mechanisms.

**Keywords:** destructive behavior, self-destruction, reasons for self-destruction, suicide statistics, suicide, Armenia.

Նախորդ մենագրության և գիտական հոդվածների մեջ մեր կողմից քննարկվել է սուիցիդի հոգեբանական պատճառականության հիմնահարցը, սույն հետազոտությունը նպատակ ունի վիճակագրական վերլուծության հիման վրա լրացնելու և, ինչու չէ, նաև հաստատելու մեր կողմից առաջ քաշված որոշ դրույթներ: Այդ է պատճառը, որ հարցի ուսումնասիրումը մենք կատարել ենք 1999թ.-ից մինչև 2015թ. ընկած ժամանակահատվածում, ՀՀ-ում տեղի ունեցած ինքնասպանությունների թվաքանակի մեկնաբանման հիման վրա, քանի որ այն հանդիսանում է հետազոտության համար յուրահատուկ և կիրառելի պոպուլյացիա: Այս հատվածում ցանկացել ենք ինքնասպանության հիմնահարցը մեկնաբանել նույնպես սոցիալական ախտաբանության տեսանկյունից, որպես անձի վրա բազմաթիվ դեստրուկտիվ գործոնների ազդեցության արդյունք: Նմանատիպ հետազոտություն մեր կողմից կատարվել է նաև նախկին ԽՍՀՄ-ի կազմի մեջ մտնող հանրապետություններում առկա ինքնասպանությունների դեպքերի հիման վրա [1,2]:

**Ինքնասպանության ցուցանիշը երկրում համարվում է ցածր, երբ յուրաքանչյուր 100000 բնակչին բաժին է ընկնում 10 ավարտված սուիցիդ, միջին, երբ՝ 10-20, իսկ եթե այդ ցուցանիշը գերազանցում է 20-ը, ապա ինքնասպանության մակարդակը համարվում է բարձր [3, էջ 6]:**

2000-2005թթ. ՀՀ-ում արձանագրվել է 2396 ինքնասպանության և ինքնասպանության փորձի դեպք: Նշված դեպքերից ամենաշատը ինքնասպանության են դիմել Շիրակի մարզում՝ 306, Արարատի մարզում՝ 200, 185՝ Լոռու մարզում: 31%-ը (745-ը) եղել են կանայք, 69%-ը (1653)՝ տղամարդիկ, 110-ը եղել են անչափահասներ: Ըստ վիճակագրության, ինքնասպաններից 115-ը (60,8%-ը) կախվել է, 13-ը՝ բարձրությունից

նետվել: 32,8%-ը աշխատանք չի ունեցել, 34,9%-ը (66-ը) եղել է սովորող, 1%-ը՝ թոշակառու:

**1999թ.** ընթացքում ՀՀ-ում արձանագրվել է 478 ինքնասպանություն և ինքնասպանության փորձեր (231 ինքնասպանություն և 247 ինքնասպանության փորձ): Ինքնասպանության և ինքնասպանության փորձ են կատարել 175 կին և 303 տղամարդ: Հատկանշական է, որ կատարված ինքնասպանության և ինքնասպանության փորձերի 40,1%-ը կամ 194-ը տեղի են ունեցել Երևան քաղաքում, 79-ը՝ Շիրակի, 57-ը՝ Լոռու, 35-ը՝ Արարատի, 21-ը՝ Գեղարքունիքի, 25-ը՝ Արմավիրի, 17-ը՝ Կոտայքի, 17-ը՝ Տավուշի, 15-ը՝ Սյունիքի, 12-ը՝ Արագածոտնի, 6-ը՝ Վայոց Ձորի մարզերում:

Վերլուծությունը ցույց է տվել, որ արձանագրված դեպքերից 316-ը կամ 66,1%-ը կատարվել են տան պայմաններում, իսկ 162-ը այլ վայրերում՝ հողամասում, անասնագոմում, նկուղում, ավտոտնակում և բնության մեջ:

Ինքնասպանություն գործելու ամենատարածված եղանակը կախվելն է՝ 182 դեպք: Ինքնասպանություն գործելիս սառը զենք են օգտագործել 119 անձինք, թունավորվել են տարբեր դեղամիջոցներով՝ 32-ը, թունաքիմիկատներով՝ 70-ը, տարբեր վայրերից ցած են նետվել՝ 64-ը, հրազենի օգտագործմամբ՝ 7-ը, իսկ ինքնահրկիզմամբ՝ 4-ը:

Տարվա ամիսների ընթացքում դեպքերի քանակը բաշխվել է գրեթե հավասարաչափ, միայն մարտ, հունիս և օգոստոս ամիսներին նկատվել է դեպքերի քանակի որոշակի աճ: Դեպքերի գերակշռող մասը կատարվել է ցերեկային ժամերին (մինչև ժամը 20.00)՝ 354 դեպք, իսկ գիշերային և ուշ ժամերին՝ 124-ը:

Պարզվել է, որ ինքնասպանություն և ինքնասպանության փորձ կատարողներից 398-ը կամ 83,3%-ը եղել են չաշխատողներ, 59-ը թոշակառու, 14-ը աշխատել են, 6-ը սովորել, իսկ 1-ը եղել է ԶՈՒ-ի ծառայող:



Ինքնասպանություն և ինքնասպանության փորձ կատարողներից 55-ը եղել են հոգեկան հիվանդներ և սոմատիկ հիվանդությամբ տառապողներ:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ինքնասպանություն և ինքնասպանության փորձ են կատարել մինչև 14 տարեկան 1 անձ, 14-17 տարեկան՝ 8 անձ, 18-25 տարեկան՝ 58 անձ, 26-35 տարեկան՝ 112, 36-50 տարեկան՝ 135, 51-65 տարեկան՝ 88, 66-75 տարեկան՝ 54, 76-ից բարձր տարիքի՝ 22 անձինք:

**2000թ.** ընթացքում ՀՀ-ում արձանագրվել է 419 ինքնասպանություն և ինքնասպանության փորձ (206 ինքնասպանություն և 213 ինքնասպանության փորձ): Ինքնասպանության և ինքնասպանության փորձ է կատարել 116 կին և 303 տղամարդ: Հատկանշական է, որ կատարված ինքնասպանության և ինքնասպանության փորձերի 45,1%-ը կամ 189-ը տեղի են ունեցել Երևան քաղաքում, 54-ը՝ Շիրակի, 33-ը՝ Լոռու, 22-ը՝ Արմավիրի, 14-ը՝ Գեղարքունիքի, 23-ը՝ Կոտայքի, 11-ը՝ Տավուշի, 20-ը՝ Սյունիքի, 45-ը՝ Արագածոտնի, 8-ը՝ Վայոց Ձորի մարզերում:

Վերլուծությունը ցույց է տվել, որ արձանագրված դեպքերից 283-ը կամ 67,5%-ը կատարվել են տան պայմաններում, իսկ 136-ը այլ վայրերում՝ հողամասում, անասնագոմերում, նկուղներում, ավտոտնակներում և բնության մեջ: Ինքնասպանություն գործելու ամենատարածված եղանակը կախվելն է՝ 132 դեպք: Ինքնասպանություն գործելիս սառը զենք են օգտագործել 113 անձինք, թունավորվել են տարբեր դեղամիջոցներով՝ 21-ը, թունաքիմիկատներով՝ 73-ը, տարբեր վայրերից ցած են նետվել՝ 73-ը, հրազենի օգտագործմամբ՝ 5-ը, իսկ ինքնահրկիզմամբ՝ 2-ը:

Տարվա ամիսների ընթացքում դեպքերի քանակը բաշխվել է գրեթե հավասարաչափ, միայն օգոստոս, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին նկատվել է դեպքերի քանակի որոշակի աճ:

Դեպքերի գերակշռող մասը կատարվել է ցերեկային ժամերի (մինչև ժամը 20.00)՝ 316 դեպք, իսկ գիշերային և ուշ ժամերին՝ 103-ը:

Պարզվել է, որ ինքնասպանության և ինքնասպանության փորձ կատարողներից 340-ը կամ 81,1%-ը եղել են չաշխատողներ, 61-ը թոշակառու, 9-ը աշխատել են, իսկ 4-ը եղել են ՁՈՒ-ի ծառայող:

Ինքնասպանություն և ինքնասպանության փորձ կատարողներից 34-ը եղել են հոգեկան հիվանդներ և սոմատիկ հիվանդությամբ տառապողներ:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ինքնասպանություն և ինքնասպանության փորձ է կատարել մինչև 14 տարեկան 5 անձ, 14-17 տարեկան՝ 14 անձ, 18-25 տարեկան՝ 57 անձ, 26-35 տարեկան՝ 89, 36-50 տարեկան՝ 121, 51-65 տարեկան՝ 73, 66-75 տարեկան՝ 38, 76-ից բարձր տարիքի՝ 22 անձ:

**2001թ.** ընթացքում ՀՀ-ում արձանագրվել է 445 ինքնասպանություն և ինքնասպանության փորձ (204 ինքնասպանություն և 241 ինքնասպանության փորձ): Դեպքերի քանակը ավելացել է 33-ով կամ 9,3%-ով:

Ինքնասպանություն և ինքնասպանության փորձ է կատարել 148 կին և 297 տղամարդ: Հատկանշական է, որ կատարված ինքնասպանության և ինքնասպանության փորձերի 45%-ը կամ 204-ը տեղի են ունեցել Երևան քաղաքում: Վերլուծությունը ցույց է տվել, որ արձանագրված դեպքերից 281-ը կատարվել են տան պայմաններում, իսկ 164-ը այլ վայրերում՝ հողամասում, անասնագոմերում, նկուղներում, ավտոտնակներում և բնության մեջ: Ինքնասպանություն գործելու ամենատարածված եղանակը կախվելն է՝ 148 դեպք, այնուհետև տարբեր դեղամիջոցներով և թունաքիմիկատներով թունավորումը՝ 87 դեպք, 66-ը տարբեր վայրերից ցած նետվելու տարբերակը, իսկ 144-ը օգտվել են սառը

զենքից, հրազենից, սուր կտրող գործիքից և ինքնահրկիզումից:

Տարվա ամիսների ընթացքում դեպքերի քանակը բաշխվել է գրեթե հավասարաչափ, միայն հունվար և փետրվար ամիսներին նկատվել է դեպքերի քանակի որոշակի աճ: Դեպքերի գերակշռող մասը կատարվել են ցերեկային ժամերի (մինչև ժամը 20.00):

Պարզվել է, որ ինքնասպանություն և ինքնասպանության փորձ կատարողներից 417-ը կամ 96%-ը եղել են չաշխատողներ, 16 սովորող, 9-ը աշխատել են, իսկ 3-ը եղել են ՋՈՒ-ի ծառայող:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ինքնասպանություն և ինքնասպանության փորձ է կատարել մինչև 18 տարեկան 27 անձ, 18-30 տարեկան 109 անձ, 30-35 տարեկան՝ 162 անձ և 50-ից բարձր տարիքի՝ 147 անձինք:

**2002թ.** ընթացքում ՀՀ-ում արձանագրվել է 473 ինքնասպանություն և ինքնասպանության փորձ (226 ինքնասպանություն և 247 ինքնասպանության փորձ): Ինքնասպանության և ինքնասպանության փորձ է կատարել 149 կին և 319 տղամարդ: Դեպքերի քանակը ավելացել է 28 -ով կամ 5,9%-ով:

Հատկանշական է, որ կատարված ինքնասպանություն և ինքնասպանության փորձերի 42,4%-ը կամ 201-ը տեղի են ունեցել Երևան քաղաքում, 61-ը՝ Գյումրիում, 16-ը՝ Արարատում, 15-ը՝ Վանաձորում, 14-ը՝ Արտաշատում, 12-ը՝ Մասիսում, 9-ը՝ Վաղարշապատում, իսկ մնացած բնակավայրերում դեպքերը բաշխված են գրեթե հավասարաչափ՝ 3-4 դեպք:

Վերլուծությունը ցույց է տվել, որ արձանագրված դեպքերից 317-ը կամ 67%-ը կատարվել են տան պայմաններում, իսկ 156-ը այլ վայրերում՝ հողամասում, անասնագոմերում, նկուղներում, ավտոտնակներում և բնության մեջ: Ինքնասպանություն գործելու ամենատարածված եղանակը կախվելն է՝ 144 դեպք:

Ինքնասպանություն գործելիս սառը զենք են օգտագործել 129 անձինք, թունավորվել են տարբեր դեղամիջոցներով և թունաքիմիկատներով՝ 86-ը, հրազենի օգտագործմամբ և ինքնահրկիզմամբ՝ 59, տարբեր վայրերից ցած են նետվել՝ 55-ը:

Տարվա ամիսների ընթացքում դեպքերի քանակը բաշխվել է գրեթե հավասարաչափ, միայն հունվար, փետրվար և դեկտեմբեր ամիսներին նկատվել է դեպքերի քանակի որոշակի աճ: Դեպքերի գերակշռող մասը կատարվել է ցերեկային ժամերին (մինչև ժամը 20.00)՝ 340 դեպք:

Պարզվել է, որ ինքնասպանություն և ինքնասպանության փորձ կատարողներից 440-ը կամ 93%-ը եղել են չաշխատողներ, 13-ը սովորող, 15-ը աշխատել են, իսկ 4-ը եղել են ՋՈՒ-ի ծառայող և 1-ը՝ դատապարտյալ:

Ինքնասպանություն և ինքնասպանության փորձ կատարողներից 69-ը եղել են հոգեկան հիվանդներ և սոմատիկ հիվանդությամբ տառապողներ:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ինքնասպանություն և ինքնասպանության փորձ է կատարել մինչև 18 տարեկան 27 անձ, 18-30 տարեկան՝ 98 անձ, 30-35 տարեկան՝ 195 անձ, 50-ից բարձր տարիքի՝ 153 անձ: Ինքնասպանության փորձ են կատարել միջին տարիքի՝ այսինքն 30-50 տարեկան, անձինք:

**2003թ.** ընթացքում ՀՀ-ում արձանագրվել է 394 ինքնասպանություն և ինքնասպանության փորձ (172 ինքնասպանություն և 222 ինքնասպանության փորձ): Դեպքերի քանակը նվազել է 79-ով կամ 16,7%-ով: Ինքնասպանություն և ինքնասպանության փորձ է կատարել 107 կին և 287 տղամարդ:

Հատկանշական է, որ կատարված ինքնասպանության և ինքնասպանության փորձերի 44,4%-ը կամ 175-ը տեղի են ունեցել Երևան քաղաքում, 32-ը՝ Գյումրիում, 23-ը՝ Վանաձորում, 14-ը՝ Վաղարշապատում, 13-ը՝ Արտաշատում, 10-ը՝ Արարատում, իսկ մնացած բնակավայրերում

դեպքերը բաշխված են գրեթե հավասարաչափ՝ 3-4 դեպք:

Վերլուծությունը ցույց է տվել, որ արձանագրված դեպքերից 218-ը կամ 55,3%-ը կատարվել են տան պայմաններում, իսկ 176-ը այլ վայրերում՝ հողամասում, անասնագոմերում, նկուղներում, ավտոտնակներում և բնության մեջ: Ինքնասպանություն գործելու ամենատարածված եղանակը կախվելն է՝ 114 դեպք: Ինքնասպանություն գործելիս սառը զենք են օգտագործել 113 անձինք, թունավորվել են տարբեր դեղամիջոցներով և թունաքիմիկատներով՝ 79-ը, տարբեր վայրերից ցած են նետվել՝ 61-ը, հրազենի օգտագործմամբ և ինքնահրկիզմամբ՝ 27-ը:

Տարվա ամիսների ընթացքում դեպքերի քանակը բաշխվել է գրեթե հավասարաչափ, միայն հունիս, հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսներին նկատվել է դեպքերի քանակի որոշակի աճ: Դեպքերի գերակշռող մասը կատարվել են ցերեկային ժամերին (մինչև ժամը 20.00)՝ 240 դեպք, իսկ գիշերային և ուշ ժամերին՝ 154-ը:

Պարզվել է, որ ինքնասպանության և ինքնասպանության փորձ կատարողներից 335-ը կամ 90,1%-ը եղել են չաշխատողներ, 8-ը՝, 23-ը աշխատել են, 5-ը եղել են դատապարտյալ, իսկ 2-ը՝ օտարերկրյա քաղաքացի:

Ինքնասպանության և ինքնասպանության փորձ կատարողներից 59-ը եղել է հոգեկան հիվանդներ և սոմատիկ հիվանդությամբ տառապողներ:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ինքնասպանություն և ինքնասպանության փորձ են կատարել մինչև 18 տարեկան 14 անձ, 18-30 տարեկան 83 անձ, 30-50 տարեկան՝ 158 անձ և 50-ից բարձր տարիքի՝ 137 անձ:

**2004թ.** ընթացքում ՀՀ-ում արձանագրվել է 389 ինքնասպանություն և ինքնասպանության փորձ (165 ինքնասպանություն և 224 ինքնասպանության փորձ): Ինքնասպանություն և ինքնասպանության փորձ է կատարել 120 կին և

269 տղամարդ: Հատկանշական է, որ կատարված ինքնասպանության և ինքնասպանության փորձերի 43,7%-ը կամ 170-ը տեղի են ունեցել Երևան քաղաքում, 49-ը՝ Շիրակի, 38-ը՝ Լոռու, 27-ը՝ Արմավիրի, 7-ը՝ Գեղարքունիքի, 27-ը՝ Կոտայքի, 13-ը՝ Տավուշի, 15-ը՝ Սյունիքի, 9-ը՝ Արագածոտնի, 4-ը՝ Վայոց Ձորի մարզերում:

Վերլուծությունը ցույց է տվել, որ արձանագրված դեպքերից 285-ը կամ 73,3%-ը կատարվել են տան պայմաններում, իսկ 104-ը այլ վայրերում՝ հողամասում, անասնագոմերում, նկուղներում, ավտոտնակներում և բնության մեջ: Ինքնասպանություն գործելու ամենատարածված եղանակը կախվելն է՝ 127 դեպք: Ինքնասպանություն գործելիս սառը զենք են օգտագործել 119 անձինք, թունավորվել են տարբեր դեղամիջոցներով և թունաքիմիկատներով՝ 81-ը, տարբեր վայրերից ցած են նետվել՝ 55-ը, հրազենի օգտագործմամբ՝ 5-ը, իսկ ինքնահրկիզմամբ՝ 2-ը:

Տարվա ամիսների ընթացքում դեպքերի քանակը բաշխվել է գրեթե հավասարաչափ, միայն մայիս, հունիս, հուլիս և օգոստոս ամիսներին նկատվել է դեպքերի քանակի որոշակի աճ: Դեպքերի գերակշռող մասը կատարվել են ցերեկային ժամերին (մինչև ժամը 20.00)՝ 291 դեպք, իսկ գիշերային և ուշ ժամերին՝ 98-ը:

Պարզվել է, որ ինքնասպանություն և ինքնասպանության փորձ կատարողներից 317-ը կամ 81,5%-ը եղել են չաշխատողներ, 22-ը՝ սովորող, 13-ը՝ աշխատել են, 3-ը՝ եղել են ՔԿԿ-ի դատապարտյալներ, իսկ 4-ը՝ ՁՊՎ-ներում պահվողներ:

Ինքնասպանություն և ինքնասպանության փորձ կատարողներից 55-ը եղել են հոգեկան հիվանդներ և սոմատիկ հիվանդությամբ տառապողներ:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ինքնասպանություն և ինքնասպանության փորձ է կատարել մինչև 18 տարեկան 18 անձ, 18-30 տարեկան՝ 99 անձ, 30-35 տարեկան՝ 144 անձ,

50-ից բարձր տարիքի՝ 128 անձ:

**2005թ.** ընթացքում ՀՀ-ում արձանագրվել է 399 ինքնասպանություն և ինքնասպանության փորձ (200 ինքնասպանություն և 199 ինքնասպանության փորձ): Ինքնասպանություն և ինքնասպանության փորձ է կատարել 119 կին և 280 տղամարդ: Հատկանշական է, որ կատարված ինքնասպանության և ինքնասպանության փորձերի 41%-ը կամ 163-ը տեղի են ունեցել Երևան քաղաքում: Նշված դեպքերից 22-ը կատարվել են Արագածոտնի, 39-ը՝ Արարատի, 18-ը՝ Արմավիրի, 16-ը՝ Գեղարքունիքի, 29-ը՝ Լոռու, 17-ը՝ Կոտայքի, 52-ը՝ Շիրակի, 19-ը՝ Սյունիքի, 6-ը՝ Վայոց Ձորի, 8-ը՝ Տավուշի մարզերի տարածքներում և 10 զինվորականների կողմից:

Ինքնասպանության կամ ինքնասպանության փորձ կատարած անձանցից 275-ը կամ 68,9%-ը իրենց կյանքի դեմ ոտնձգություն են կատարել բնակելի վայրերում, 88-ը կամ 22%-ը բնակելի վայրերից դուրս, 9-ը կամ 2,2%-ը ԲԿՀ-ում կամ ԶՊՎ-ներում: 124-ը կամ 31% ինքնասպանության են դիմել կախվելու, 43-ը կամ 10,8%-ը բարձրությունից նետվելու, 143-

ը կամ 35,8%-ը թունավորվել են տարբեր դեղամիջոցներով և թունաքիմիկատներով, 121-ը կամ 30,3%-ը կյանքից հեռանալու նպատակով օգտագործել են սառը զենք և 11-ը կամ 2,7%-ը՝ հրազեն: Ինքնասպանության դիմած 399 անձանցից մշտական աշխատանք են ունեցել, 223-ը կամ 55,9%-ը աշխատանք չեն ունեցել, 24-ը կամ 6%-ը եղել են սովորողներ, 11-ը կամ 2,8%-ը՝ զինծառայողներ, 88-ը կամ 22%-ը եղել են թոշակառուներ:

Ինքնասպանության դիմած անձանցից 83-ը կամ 20,8%-ը եղել են հոգեկան հիվանդներ:

Ռիսկոմնասիրությունը ցույց է տալիս, որ ինքնասպանություն և ինքնասպանության փորձ է կատարել մինչև 18 տարեկան 26 անձ, 18-60 տարեկան 296 անձ, 60-ից բարձր տարիքի՝ 80 անձ:

Հայաստանի Հանրապետությունում 2000-2005 թ.թ. ընթացքում իրենց կյանքի նկատմամբ ինքնասպանության միջոցով ոտնձգություն է կատարել 2396 մարդ, որոնցից 1241-ը կամ 51,8%-ը կյանքն ավարտել են մահով, իսկ 1157-ը կամ 48,3%-ը նպատակին չեն հասել իրենց կամքից անկախ պատճառներով:

**Աղյուսակ 1.**

**Ինքնասպանության և ինքնասպանության փորձերի ընդհանուր թիվը Հայաստանի Հանրապետությունում ըստ տարիների (լրացուցիչ տվյալներով)**

№	թվականը	ինքնբազ. և ինքնասպ. փորձերի ընդհան. թիվը	ինքնասպ. ընդհան. թիվը	ինքնասպ. փորձերի ընդհան. թիվը	տղամարդ	կին	տղամարդ / կին	հոգեկան հիվանդ ինքնասպ.	առողջ ինքնասպ.
1	1999	478	231	247	303	175	1,73	55	423
2	2000	419	206	213	303	116	2,61	34	385
3	2001	445	204	241	297	148	2,0	41	404
4	2002	473	226	247	319	149	2,14	69	404
5	2003	394	172	222	287	107	2,68	59	335
6	2004	389	165	224	269	120	2,24	55	334
7	2005	399	200	199	280	119	2,35	83	316

**Աղյուսակ 2.**

**Ինքնասպանության և ինքնասպանության փորձերի ընդհանուր թիվը Երևան քաղաքի տարբեր համայնքներում (ըստ տարիների)**

№	համայնք	2001	2002	2003	2004	2005	M
1	Աջափնյակ Դավթաշեն	21	26	30	27	22	25,0
2	Ավան Նոր -Նորք	20	26	22	19	16	20,6
3	Արաբկիր Քանաքեռ Ջեյթուն	29	36	37	26	29	31,4
4	Էրեբունի Նուբարաշեն	21	13	15	23	20	18,4
5	Կենտրոն Նորք-Մարաշ	24	20	20	27	26	23,4
6	Մալաթիա-Սեբաստիա	29	24	18	23	24	23,6
7	Շենգավիթ	27	25	16	14	26	21,6
8	Ընդամենը	171	170	158	159	163	164,2

**Աղյուսակ 3.**

**Ինքնասպանության և ինքնասպանության փորձերի ընդհանուր թիվը Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում (ըստ տարիների)**

№	մարզը	1999	2000	2001	2002	2003	2004	2005	M
1	Երևան	194	189	171	170	175	170	163	176
2	Շիրակ	79	54	40	74	46	49	52	56
3	Լոռի	57	33	27	29	36	38	29	35,6
4	Արարատ	35	0	26	40	31	30	39	33,5
5	Գեղարքունիք	21	14	10	19	7	7	16	13,4
6	Արմավիր	25	22	26	18	24	27	18	22,85
7	Կոտայք	17	23	40	23	31	27	17	25,4
8	Տավուշ	17	11	11	12	11	13	8	11,85
9	Սյունիք	15	20	25	18	15	15	19	18
10	Արագածոտն	12	45	13	13	9	9	22	17,6
11	Վայոց ձոր	6	8	3	4	5	4	6	5,1

**Աղյուսակ 4.**

**Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում  
(100.000 բնակչին ընկնող ցուցանիշով)**

մարզերը	Երևան	Շիրակ	Լոռի	Արարատ	Գեղարքունիք	Արմավիր	Կոտայք	Տավուշ	Սյունիք	Արագածոտն	Վայոց ձոր
ցուցանիշները	15,97	9,82	12,49	12,31	5,63	8,25	9,32	8,82	11,78	12,7	5,1

**Աղյուսակ 5.**

**Յուրաքանչյուր օրվա ընթացքում ինքնասպանության և ինքնասպանության փորձերի ընդհանուր թիվը Հայաստանի Հանրապետությունում**

թվականը	1999	2000	2001	2002	2003	2004	2005
թվաքանակը	1,3	1,14	1,21	1,2	1,07	1,06	1,09

Սովորաբար պաշտոնական վիճակագրության մեջ ընդգրկվում են միայն սուիցիդի վառ դեպքերը, այդ է պատճառը, որ իրական ցուցանիշը գերազանցում է այդ պաշտոնական ցուցանիշը: Դատական փորձագետների կարծիքով, այսպես կոչված, դժբախտ պատահարներից առաջացած մահվան դեպքերը դեղանյութերի գերդոզավորում, ավտոցիդներ, բարձր վայրերից ընկնելը, նույնպես

պետք է դասվեն սուիցիդների խմբին:

Առողջապահության Համաշխարհային կազմակերպության տվյալներով ավարտված սուիցիդների քանակը տղամարդկանց մոտ միջին հաշվով 4 անգամ ավելի է, քան կանանց մոտ, չնայած այս ցուցանիշը տարբեր երկրներում կարող է տարբեր տատանումներ ունենալ:

**Աղյուսակ 6.**

**Ինքնասպանության և ինքնասպանության փորձերի տարիքային բնութագիրը**

№	թվականը	մինչև 18տ.	18-30տ.	30-50տ.	50-ից բարձր
1	1999	9	58	247	164
2	2000	19	57	210	133
3	2001	27	109	160	147
4	2002	27	98	195	153
5	2003	14	83	153	137
6	2004	18	99	144	128
7	2005	19	27	103	65
8	միջինը	19	76	173	132

**Աղյուսակ 7.**

**Ինքնասպանություն և ինքնասպանության փորձ կատարած անձանց զբաղվածությունը բնութագիրը**

№	թվականը	աշխատող	գործազուրկ	սովորող	զինծառայող	թոշակառու
1	2000	40	236	21	7	92
2	2001	30	250	26	10	86
3	2002	58	232	25	15	104
4	2003	41	253	14	4	65
5	2004	44	225	25	13	80
6	2005	66	223	24	11	88
7	միջինը	46,5	236,5	135	10	86

**Աղյուսակ 8.**


**Ինքնասպանություն և ինքնասպանության փորձերի իրականացման ձևերը**

№	թվականը	կախվելով	բարձրունքից ցած նետվելով	դեղամիջոցի կիրառմամբ	սառը զենքի կիրառմամբ	հրազենի միջոցով
1	2000	111	77	99	98	11
2	2001	159	53	88	91	11
3	2002	152	53	100	110	18
4	2003	126	54	78	107	11
5	2004	149	58	67	98	13
6	2005	124	43	143	121	11
7	ընդամենը	821	338	575	625	75
8	միջինը	137	56	96	104	13



**Ինքնասպանության վիճակը Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում (100.000 բնակչին ընկնող ցուցանիշով)**

**100.000 բնակչին ընկնող ինքնասպանների թիվն ըստ տարիների**



Հայաստանում 2009թ-ի համեմատ 2011թ-ին ինքնասպանության և ինքնասպանության փորձերի թիվը 149-ով ավելացել է: Եթե 2009թ-ին ՀՀ-ում ինքնասպանության և ինքնասպանության փորձի է դիմել 498 մարդ, իսկ 2011թ-ին նրանց թիվը 647 է: Ավելին՝ ինքնասպանության և ինքնասպանության փորձի դիմած քաղաքացիների գերակշռող մասը արական սեռի ներկայացուցիչներն են: Այս մասին տեղեկացնում է Ազգային վիճակագրական ծառայությունը:

Հայաստանում արձանագրված ինքնասպանության և ինքնասպանության փորձերի դեպքերը հետևյալ վիճակագրական պատկերն ունի.

- 2009թ. Ինքնասպանություն և ինքնասպանության փորձ – 498, որից 163-ը իգական սեռի ներկայացուցիչներ են.
  - 498-ից ինքնասպանություն են գործել 197 մարդ
  - մինչև 17 տարեկան՝ 12
  - 18-29 տարեկան՝ 38
  - 30-65 տարեկան՝ 100

- 65 և ավելի՝ 47:
- 2009՝ ինքնասպանության փորձ, 301, որից 120-ը իգական սեռի ներկայացուցիչներ են.
  - մինչև 17 տարեկան՝ 19
  - 18-29 տարեկան՝ 103
  - 30-65 տարեկան՝ 148
  - 65 և ավելի՝ 31
- 2011թ. Ինքնասպանություն և ինքնասպանության փորձ է կատարել 647 մարդ, որից 242-ը իգական սեռի ներկայացուցիչներ են.
  - 647 անձանցից ինքնասպանություն են գործել 195-ը
    - մինչև 17 տարեկան՝ 9
    - 18-29 տարեկան՝ 33
    - 30-65 տարեկան՝ 108
    - 65 և ավելի՝ 45
- Ինքնասպանության փորձ է կատարել 452 անձ
  - մինչև 17 տարեկան՝ 26
  - 18-29 տարեկան՝ 162
  - 30-65 տարեկան՝ 214
  - 65 և ավելի՝ 50:



Պարզվում է, որ ըստ սոցիալական կարգավիճակի և զբաղվածության, ինքնասպանության ու ինքնասպանության փորձերի դեպքերի 56,7% արձանագրվել է գործազուրկների ու 16,5%՝ թոշակառուների խմբերում: Ինքնասպանության ու ինքնասպանության փորձերի դեպքերի 27,7% կատարվել է սուր-կտրոդ, ծակող կամ այլ գործիքով, 24,6%՝ դեղամիջոցների կամ այլ նյութի օգտագործման, 21,8%՝ կախվելու, 16,5%՝ բարձրությունից նետվելու և 9,4%՝ այլ եղանակներով: Ինքնասպանության դեպքերի գերակշիռ մեծամասնությունը՝ շուրջ 60% կատարվել է կախվելու, 20%՝ բարձրությունից նետվելու եղանակով: Հարկ է նկատել, որ ըստ հոգեբանների, ինքնասպանության և ինքնասպանության փորձի արական սեռի ներկայացուցիչները ավելի շատ են դիմում, քան կանայք, որովհետև կանանց կամային հասկանիչներն ու ստեղծված իրավիճակից դուրս գալու ճարակությունը ավելի մեծ է: 2011 թ. ՀՀ Քրեական օրենսգրքի 110 հոդվածով (ինքնասպանության հասցնելը) հարուցվել է 22 քրեական գործ: Այդ հոդվածով 2010 թ. հարուցվել էր 21 քրեական գործ:

Ըստ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տրամադրած տվյալների, 2010թ. հունվար-դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են 592 ինքնասպանության և ինքնասպանության փորձերի դեպքեր՝ 2009թ. համեմատ աճելով 18,9%-ով: Դեպքերի տարիքային կառուցվածքում գերակշռել են 30-65

(48,9%) և 65 ու բարձր (28%) տարիքի անձիք: Ինքնասպանության ու ինքնասպանության փորձերի 57,3%-ն արձանագրվել է գործազուրկների և 17,7%-ը թոշակառուների խմբերում:

Բանակում կատարված ինքնասպանությունները ըստ տարիների ունեն հետևյալ տեսքը՝ 2009 թվականին՝ 10, 2010 թվականին՝ 6, որից 4-ը իրականացրել են շարքայիներ, 1-ը՝ պայմանագրային, իսկ 1-ը՝ սպա: Ինքնասպանությունների թիվը Հայաստանում նախորդ երկու տարիների համեմատ կրճատվել է 13,3%՝ կազմելով 195 դեպք: Այս փաստը հաստատում են Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայության տվյալները, համաձայն որոնց 2011 թվականին Հայաստանում արձանագրվել է ինքնասպանության և ինքնասպանության փորձի 647 դեպք, ինչը 9,3% գերազանցում է 2010 թվականի ցուցանիշը: Ինքնասպանություն կատարածների թվում գերակշռում են 30-65 տարեկան մարդիկ (55,4%), ընդ որում, հիմնականում՝ տղամարդիկ: Դրանց գերակշիռ մասը կենսաթոշակային տարիքի մարդիկ են և գործազուրկներ: Օրինակ, 65 և ավելի տարեկանում ինքնասպանություն կատարածների թիվը կազմում է 23,1%: 30-65 տարեկանների միայն 47,3%-ն է գնում նման ծայրահեղ քայլի, իսկ 18-29 տարեկանների՝ 35,8%-ը:

ԱՎԾ տվյալներով՝ 2009թ. ինքնասպանություն կամ ինքնասպանության փորձ է կատարել 498, 2010-ին՝ 592, 2011-ին՝ 647, 2012թ՝ 740 հոգի [5]:

**Ինքնասպանության և ինքնասպանության փորձերի թիվը Հայաստանի Հանրապետությունում**

2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.
498	592	647	740

**Ինքնասպանության թիվը Հայաստանի Հանրապետությունում**

2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.
197	225	195	214	214

Ներկայումս ՀՀ-ում 1 օրում իրականացվում է 2 ինքնասպանություն և ինքնասպանության փորձ: Միջին տվյալներով յուրաքանչյուր 3 օրում արձանագրվում է 2 ինքնասպանություն: 2012թ. հոկտեմբերին կայացած մարդահամարի տվյալներով ՀՀ-ում ապրում է 2,8 միլիոն մարդ: Ինքնասպանության և ինքնասպանության փորձերի թիվը 2012թ.-ին ՀՀ-ում 100.000 բնակչի հաշվարկով կազմել է 26,42: Ինքնասպանության թիվը 2012 թ.-ին ՀՀ-ում 100.000 բնակչի հաշվարկով կազմել է 7,64 [2]:

Հայաստանում 2015 թ. հունվար-հունիսին արձանագրվել է ինքնասպանության և ինքնասպանության փորձերի 397 դեպք: Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ արձանագրվել է դեպքերի աճ 74-ով (23%-ով): Ընդ որում, ինքնասպանություն և ինքնասպանության փորձ են կատարում հիմնականում 30-ից 65 տարեկան տղամարդիկ (ինքնասպանությունների ընդհանուր թվի 40%): Ավելին՝ ինքնասպանություն կատարողների շուրջ 50 և ինքնասպանության փորձ կատարողների շուրջ 65%-ը գործազուրկ են, ինչը ևս գալիս է ապացուցելու, որ հաճախ անձինք դիմում են ինքնասպանության՝ ծանր սոցիալական վիճակից դրդված [4]: Ինքնասպանությունների թիվը տարեց տարի աճում է: Եթե 2009 թվականին ինքնասպանության 498 դեպք է գրանցվել, ապա 2015 թվականին այն կազմել է 722:

Ի դեպ, ուսումնասիրությունից պարզվեց, որ պետության մեջ ինքնասպանությունների ցուցանիշներով կարելի է պատկերացում կազմել տվյալ երկրի սոցիալական ախտահարման և հասարակության մեջ լարվածության մասին, առավել ևս, պատերազմական պայմաններում գտնվելու դեպքում, պետք է ձեռնպահ մնալ սուիցիդալ ցուցանիշների հրապարակայնությունից: Բացի այդ, նմանատիպ տեղեկատվությունը անձի վրա ունի դեստրուկտիվ ազդեցություն: Ինքնասպանությունների վիճակագրական վերլուծությունը հնարավորություն կտա

օբյեկտիվորեն մեկնաբանելու նման վարքի առաջացման դրդապատճառները, նպաստող պայմանները, մեխանիզմները:

Այսպիսով, ինքնասպանության միջոցով մարդկությունը կարծես թե փորձում է «ակնթարթորեն լուծել կյանքի հավերժական հիմնախնդիրները»:

### Գրականություն

1. Վարդանյան Կ.Ե., Անձի հոգեբանական առանձնահատկությունների դերը սուիցիդալ վարքի պատճառականության շրջայում (ինքնասպանի հոգեբանական նկարագիրը), «Դավիթ թագավոր» տպարան, Երևան 2008, 358 էջ:

2. Վարդանյան Կ.Ե., Ինքնասպանության վիճակագրական մեկնաբանումը, ԵՊՀ կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները միջրուսական գիտական հոդվածների ժողովածու, Երևան 2007, էջ 133-141:

3. Ефремов В.С. Основы суицидологии. – Диалект, 2004.

4. [http://www.aravot.am/2015/08/25/602477/?utm\\_source=dlvr.it&utm\\_medium=facebook](http://www.aravot.am/2015/08/25/602477/?utm_source=dlvr.it&utm_medium=facebook)

5. Հայաստանի վիճակագրական տարեգիրք / տարբեր տարիներ/:

**Տեղեկություններ հեղինակի մասին՝**  
**Վարդանյան Կամո Երեմի,**  
հոգ. գիտ. դոկտոր, դոցենտ  
**Խ.Աբովյանի անվան հայկական**  
**պետական մանկավարժական**  
**համալսարան**  
Գիտահետազոտական կենտրոնի տնօրեն  
Հասցե՝ Տիգրան Մեծի, 17, Երևան  
Հեռ. +374-10-59 70 79  
Բջջ. +374-91-56-13-06  
E-mail: kamo.vardanyan@mail.ru

**Ստացվել է 23.06.2016**

## ПСИХОПАТОЛОГИЯ СПИТАКСКОГО ЗЕМЛЕТРЯСЕНИЯ 1988 ГОДА: СТАТИКА И ДИНАМИКА. Часть 2

**С.Г. Сукиасян**

**Отделение реабилитации психического здоровья «Стресс» медицинского реабилитационного центра «Артмед»**

**Кафедра психического здоровья и психиатрии армянского медицинского института  
Армянский государственный педагогический университет имени Хачатура Абовяна  
Ереван, Армения**

Вторая часть исследования посвящена изучению психопатологических расстройств у пострадавших при Спитакском землетрясении, госпитализированных в общесоматическую больницу. Психические расстройства в виде затяжных реактивных состояний, реактивно спровоцированных неврозоподобных расстройств на почве органического поражения головного мозга и эндогенной депрессии были выявлены у 70% обследованных. Клинически состояние пациентов определялось астеническими, депрессивно-ипохондрическими и истероформными расстройствами. Независимо от нозологической принадлежности и синдромологической формы расстройства проявлялись тремя взаимосвязанными и взаимозависимыми уровнями - ощущений (соматические симптомы, сенестопатии, вегетативные расстройства), аффекта (депрессия) и идеаторных проявлений (ипохондрия). Их сочетание придает соматоформный характер затяжным реактивным состояниям, выявленным у пострадавших от землетрясения. Выделены патогенетически значимые факторы формирования психопатологических синдромов. Показана необходимость создания звена психиатрической и медико-психологической помощи в системе общемедицинских мероприятий, основные задачи которого заключаются в купировании острых психотических реакций, сортировке лиц с психическими расстройствами, организации поэтапного лечения, медико-психологической поддержке населения пострадавших районов. Проведен анализ последующего периода развития общества, названного периодом экстремальности.

**Ключевые слова:** землетрясение, спитакское землетрясение, медицина катастроф, посттравматическое стрессовое расстройство, реактивное расстройство, экстремальность.

### 1988թ. ՄՊԻՏԱԿԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՀՈԳԵԱԽՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ՄՏԱՏԻԿԱ ԵՎ ԴԻՆԱՄԻԿԱ: ՄԱՍ 2

**Ս.Տ. Սուքիասյան**

**«ԱՐՏՄԵԴ» բժշկական վերականգնողական կենտրոնի «Սթրես» հոգեկան առողջության վերականգնողական բաժանմունք**

**Հայկական բժշկական ինստիտուտի հոգեկան առողջության և հոգեբուժության ամբիոն**

**Խաչատուր Արթվյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան  
Երևան, Հայաստան**

Ուսումնասիրության երկրորդ մասը նվիրված է Սպիտակի երկրաշարժից տուժածների

հետազոտությանը, որոնք դիմել էին ընդհանուր տիպի հիվանդանոց: Այդ հիվանդների 70%-ի մոտ հայտնաբերվել էին հոգեկան խանգարումներ՝ ձգձգվող ռեակտիվ վիճակների, ռեակտիվ խթանված ներդանման խանգարումների և էնդոգեն դեպրեսիաների ձևով: Կլինիկական պատկերները հիմնականում դրսևորվում էին ասթենիկ, դեպրեսիվ-հիպոխոնդրիկ և հիսթերոֆորմ խանգարումներով: Անկախ նոզոլոգիական պատկանելիությունից և համախտանիշային ձևավորումից այդ խանգարումները արտահայտվում էին երեք փոխկապակցված և փոխապայմանավորված բաղադրամասերից՝ զգացողություններ, աֆեկտ և հիպոխոնդրիկ դրսևորումներ: Սրանց համակցությունները խանգարումներին տալիս են սոմատոֆորմ բնույթ: Առանձնացվել են պաթոգենետիկ առումով նշանակալից գործոնները: Ցույց է տված հոգեբուժական և բժշկա-հոգեբանական օգնության օղակի ստեղծման անհրաժեշտությունը: Կատարված է նաև հետադետալիս հասարակության զարգացման վերլուծություն:

**Հանգուցային բառեր.** երկրաշարժ, սպիտակի երկրաշարժ, աղետների բժշկություն, հետտրավմատիկ սթրեսային խանգարում, ռեակտիվ խանգարում, էքստրեմալություն:

## THE PSYCHOPATHOLOGY OF SPITAK EARTHQUAKE 1988: STATICS AND DYNAMICS. PART 2

**S.G. Sukiasyan**

**Mental Health Rehabilitation Department "Stress" of Medical Rehabilitation Center "Artmed"**

**The Department of Mental Health and Psychiatry of the Armenian Medical Institute**

**Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan**

**Yerevan, Armenia**

The second part of the research devoted to the study of psychopathological disorders in victims of the Spitak earthquake, hospitalized in general hospitals. Mental disorders as protracted reactive states, reactively provoked neurosis-like disorders on the basis of organic brain damage and endogenous depression were found in 70% of patients. Patient's clinical status was determined as asthenia, depressive-hypochondriac and hysterophorm disorders. Regardless of nosology and syndromological form, disorders manifested by three interrelated and interdependent levels: perceptive (somatic symptoms, cenesthopathy, vegetative disorders), affective (depression) and ideator symptoms (hypochondria). Their combination gives somatoform nature to the protracted reactive conditions, identified in victims of the earthquake. The pathogenetically significant factors in forming of psychopathological syndromes were selected. The necessity of creating psychiatric care and psychological assistance integrated to the general health care - system is proved. The main task of these services would be the relief of acute psychotic reactions, referral of persons with mental disorders, organization of the stages of treatment, psychological support to the affected population. The analysis of the follow-up period of the society, called a period of extremity was performed.

**Keywords:** earthquake, Spitak earthquake, disaster medicine, post-traumatic stress disorder, reactive disorder, extremity.

### **Затяжные реактивные состояния в общесоматической больнице клинико-психопатологические аспекты.**

